ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 6, 1958 Общественные науки

Դ. Ֆիրսցյան

ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայ ժողովրդի պատմության հնագույն ժամանակաշրջանը, Ուրարտական պետության անկումից (ն. մ. թ. 6-րդ դարի սկիզբը) մինչև Հայկական լեռնաշխարհի միավորումը Արտաշես I-ի օրոք (ն. մ. թ. 2-րդ դարի սկիզբը), անբավարար կերպով էր ուսումնասիրվում անցյալում: Նման դրության պատճառներից մեկը աղբյուրների սակավությունն է, որի հետևանքով, իսկապես, անհնարին էր և դեռ այժմ էլ անհնարին է տալ այդ էպոխայի քիչ թե շատ կապակցված պատմությունը:

Միևնույն ժամանակ, դնալով ավելի ու ավելի պարզ է դառնում, որ քննության առնվող էպոխայում տեղի են ունեցել հայ ժողովրդի պատմության համար կարևորագույն նշանակություն ունեցող պրոցեսներ, ինչպիսիք են՝ դասակարգերի, դասակարգային հասարակության ձևավորումը, պետության առաջացումը, հայ ժողովրդի կազմավորման ավարտը:

Սովետահայ պատմագրության երախտիքներից մեկն էլ հանդիսանում է այն, որ նրա ներկայացուցիչները ուշադրություն հրավիրեցին նշված էպոխայի ուսումնասիրության անհրաժեշտության վրա: Ակադ. Մանանդյանը[1] և Ս. Տ. Երեմյանը[2] իրենց մի շարք աշխատություններում պարզեցին, որ ն. մ. թ. 6—2-րդ դարերում Հայաստանում տեղի ունեցող պատմական պրոցեսները իրագործվեցին Երվանդունիների տոհմի ներկայացուցիչների քաղաքական գերակայության պայմաններում, միևնույն ժամանակ վեր հանեցին այդ էպոխայի մի շարք կարևոր մոմենտներ: Սույն հոդվածը հավակնություն չունենալով շարադրելու 6—2-րդ դարերի պատմությունը, իր առջև իրնդիր է դնում ցույց տալու նրա մի քանի հիմնական էտապները:

Փաստերը վկայում են այն մասին, որ դեռևս Ուրարտական պետության ընդերքում հայ-արմենական էթնիկական տարրը ստեղծել էր տերիտորիալ երկու օջախ, մեկը Արմե-Շուպրիայում[3], մյուսը Վանի ավազանի որոշ մասերում[4]: Ուրարտական պետության դժվարությունները, նրա գոյության վերջին տարիներին և ապա Ուրարտական պետության վերջնական փլուզումը, նպաստավոր պայմաններ ստեղծեցին, որպեսզի նշված օջախները միավորվեն և

---

[1] „О торговле и городах Армении", Ереван, 1930, *ինչպես նաև երկրորդ հրատարակությունը, Երևան, 1954, «Ինչական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատ. Ա, Երևան, 1944, «Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ», Երևան, 1946, «Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը», Երևան, 1946:*

[2] *С. Т. Еремян*, Проблема этногенеза армян..., „Известия" АН АрмССР, серия общественных наук, 1951, № 6.

„К вопросу об этногенезе армян", „Вопросы истории", 1952, № 7.

[3] *Б. Б. Пиотровский*, О происхождении армянского народа, Ереван, 1945.

[4] *С. Т. Еремян*, Рабовладельческое общество древней Армении (автореферат докторской диссертации), М., 1953.

Հայկական լեռնաշխարհում քաղաքական գերիշխանությունն անցնի հայ-արմենական ցեղերին[1]։

Երվանդ 1-ին և Տիգրան 1-ին (Ն. մ. թ. 6-րդ դարի կեսերը)

Առաջին հայ իշխանավորը, որին մենք հանդիպում ենք Ուրարտական պետության անկումից հետո, դա Երվանդ՝ Սակավակյաց հորջորջված թագավորն է։

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի 21-րդ գլխում գետեղված է մարաց և հայոց թագավորների սինխրոնիկ տախտակը։

[1] Ուրարտական պետության և հայ-արմենական ցեղերի փոխհարաբերության հարցը ամենահետաքրքիրներից է։ Նշված ժամանակաշրջանի հետազոտողներին զբաղեցնում են հատկապես պատմական այն պրոցեսները, որոնք հանգեցին, զեռևս Ուրարտական պետության գոյության պայմաններում ծայր առած հայ-արմենական ցեղերի քաղաքական միավորման վերջնական հաղթանակին Հայկական լեռնաշխարհում (տե՛ս այդ մասին Ա. Տ. Երեմյանի հիշված աշխատությունը)։ Ուրարտա-հայկական փոխհարաբերությունները պատկերող երևույթներից մեկը ընդունված է համարել ուրարտական դինաստիայի մեջ կատարված ենթադրական փոփոխությունները։ Ըստ ուրարտական պատմության ամենավերջին շրջանի նոր մեկնաբանությունների, Ուրարտուի գահի վրա բարձրանում է հայ-արմենական վերնախավի ներկայացուցիչը հանձին վերջին թագավոր Ռուսայի՝ Էրիմենայի որդու։ Դեռևս 30-ական թվականներին արտահայտվել էր այն միտքը, որ հանձին Էրիմենայի, մենք գործ ունենք ոչ թե ուրարտական ինչ որ թագավորի հետ, այլ արմենական էթնիկական պատկանելիությունը արտահայտող մի անվան հետ (*И. И. Мещанинов.* К анализу имени Эримена, Язык и мышление, I, Ленинград, 1933, стр. 40—42). Այս կապակցությամբ նույնիսկ առաջադրվում էր ուրարտական Ռուսա անվանը համապատասխանող հայկական (կարգա՝ իրանական) Երվազ անունը (Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 221, „Хетские боги у армян", Ереван, 1940, стр. 221 և «Արա Գեղեցիկի պաշտամունքը», Երևան, 1945, էջ 98)։ Ապա հաշվի էր առնվում այն հանգամանքը, որ Երվազ անունը բնորոշ է Երվանդունիներին, և արձանագրում էին Ուրմիա լճի արևմտյան շրջաններում օրոնտների ցեղի առկայության փաստը (Plinius, Historia Naturalis, v. 1.) ու եզրակացնում, որ Երվազը՝ Երվանդունիների տոհմից, առաջնորդում էր հայ-արմենական այն ցեղերը, որոնք մեդացիների հետ դաշնակցած նվաճեցին Ուրարտուի մայրաքաղաք Տուշպան, որտեղ թագավորեց Երվազը, Ռուսա Էրիմենայի որդի (այսինքն «Երվազ արմենական») անվան տակ (*С. Т. Еремян.* Проблема этногенеза армян... „Известия", 1951, № 6, стр. 46)։

Ն. մ. թ. 7-րդ դարի վերջին և 6-րդ դարի սկզբներին Մերձավոր Արևելքում գոյություն ունեցող պատմական զրույցները չի բացառում գեպքերի այդպիսի ընթացքը։ Պարզվում է նախ, որ Ուրարտական պետության խորտակումը մեդացիների կողմից կատարվել է ոչ միանգամից։ Ինչպես ցույց է տալիս Բաբելոնի թագավոր Նաբուպալասարի տարեգրությունը, Ն. մ. թ. 609 թ. տեղի է ունենում մեդացիների առաջին արշավանքը դեպի Ուրարտու, որը հպատակեցվել, բայց չի ոչնչացվել։ Միայն 590 թ. է, որ մեդա-յուզիական պատերազմի կապակցությամբ, Ուրարտական պետությունը իսպառ լիկվիդացվում է և նրա տեղը բռնում է հայ-արմենական թագավորությունը (տե՛ս *Н. М. Дьяконов.* Последние годы Урартского государства по ассиро-вавилонским источникам, ВДИ, 1951, № 2).

Հնարավոր է ուրեմն, որ անցման այս ժամանակաշրջանում՝ 609—590 թթ. հայ-արմենական ցեղերը օգտվեին առիթից, առավելապես ամրապնդելու իրենց դիրքերն Ուրարտական պետության մեջ և այդ կապակցությամբ ուրարտական գահի վրա բարձրանար այդ ցեղերի ներկայացուցիչը հանձին Երվազ-Ռուսայի։

Վերը շարադրված դայթակղեցուցիչ տեսությունը վերջնական լինել չի կարող, մի շարք կետերում խոցելի լինելու պատճառով։ Բայց և այնպես թեական լինելով հանդերձ, նա չի կարող նվազեցնել մեր հետաքրքրությունը ուրարտա—հայկական քաղաքական փոխհարաբերությունների հարցի նկատմամբ։

Ինչպես երևում է մարաց թագավորների ցուցակի աղբյուրագիտական վերլուծությունից, նա հենվում է մեդական թագավորներին հիշատակող երկու հեղինակների վրա։ Հերոդոտից են վերցված նրա առաջին գրքի 96—108 գլուխներում մեջբերված մեդական չորս թագավորները, որոնք, ինչպես պարզվում է այժմ, արդարացնում են իրենց որպես պատմական անձնավորություններ և որոնք Մ. Խորենացու մոտ բերված են մեդական թագավորների ցուցակի վերջում (Դեոկես, Փռավորտես, Կվաքսարես, Աժդահակ)։ Այդ նույնը չի կարելի ասել Խորենացու նույն ցուցակի մեդական մյուս թագավորների մասին, որոնք ինչպես պարզվում է, վերցված են Դիոդոր Սիկիլիացուց (տե՛ս գիրք 2-րդ, 32-րդ գլուխ), որին իր հերթին աղբյուր է ծառայել վատ պատմիչի համբավ ունեցող Կտեսիաս Կնիտացին[1]։

Մեդական թագավորների այս անունները, որոնք Խորենացին պարզապես միացրել է հերոդոտյան ցուցակին, պատմական չեն։ Ստացվել է այդպիսով մարաց թագավորների մի պատկառելի ցուցակ, որի մի մասը ճիշտ է, մյուսը՝ ոչ։

Հավաքելով Հայաստանի առանձին մասերում տարբեր ժամանակներում իշխող կառավարիչների անունները, Խորենացին ներկայացրել է նաև հայոց թագավորների մի ցուցակ ու հակադրել մեդական թագավորների ցուցակին[2]։ Մի էական վերապահումով ասակայն, որ ցուցակի վերջին երկու թագավորների անունները՝ Երվանդ և Տիգրան, որոնց նա հիշում է Մարաց վերջին թագավոր Աժդահակի (Աստիագեսի) դիմաց, լիովին պատմական են և, ի տարբերություն նրանց նախորդող անունների, հաստատվում են որպես իրական[3]։ Նրանց պատմականությունը հանդես կգա, եթե մենք Խորենացու այս տվյալները զուգադրենք և համեմատենք այլ սկզբնաղբյուրների հետ։ 3—4-րդ դարերի հույն պատմագիր Քսենոֆոնի «Կյուրոպեդիա» աշխատության օգտագործումը այս դեպքում, թվում է, թե կարող է օգուտ բերել գործին։ Իսկապես, եթե մենք համեմատելու լինենք Երվանդի ու Տիգրանի, հատկապես այս վերջինի մասին Խորենացու մոտ պահպանված տեղեկությունները (գիրք Ա, գլ. ԻԲ, ԻԴ-ԼԱ) «Կյուրոպեդիայի» տվյալների հետ, ապա կտեսնենք, որ երկուսն էլ պատմական միևնույն ժամանակաշրջանին են վերաբերում։

«Հայոց պատմության» ԻԲ գլխի արդեն հիշատակված ցուցակում, Երվանդն ու Տիգրանը բերված են իբրև Կիաքսար թագավորի որդի՝ Մեդիայի վերջին թագավոր Աժդահակի[4] ժամանակակիցներ, որը, ինչպես հայտնի է, իշխել է ն. մ. թ. 585—550 թվականներին։ Հաջորդ գլուխներում (ԻԴ-ԼԱ) շարադրված դեպքերը ևս, որտեղ Տիգրան Երվանդյանի կողքին հանդես են գալիս Մարաց Աժդահակ թագավորն ու Պարսից Կյուրոս թագավորը, վերաբերում են, անկասկած, 6-րդ դարի այն ժամանակաշրջանին, որն Առաջավոր Ասիա-

[1] *И. М. Дьяконов*, Последние годы Урартского государства по ассиро-вавилонским источникам. ВДИ, 1951, № 2.

[2] *Б. Б. Пиотровский*, О происхождении армянского народа.

[3] Խորենացին կարծես կասկել է տալիս այս հանգամանքը։ Նա մի քանի անգամ անդրադառնում է այս երկու անձնավորություններին (գիրք Ա, գլ. ԻԲ, ԻԴ-ԼԱ, ապա գիրք Բ, գլ. ԿԵ), այնինչ ցուցակի մյուս անձերը (բացառությամբ Պարույրի) «Հայոց պատմության» մեջ ոչ մի տեղ չեն հիշատակվում։

[4] Տվյալ դեպքում պատմահայրը միահյուսում է հունական տեղեկությունները Աստիագեսի մասին, արևելյան առասպելների հետ ժի-գահակ հրեշ-վիշապի մասին։ Տե՛ս *И. М. Дьяконов*, История Мидии, М.—Л., 1956, стр. 43.

յում նշանավորվեց մեդացիների իշխանության անկումով և պարսիկների իշխանության հաստատումով։

Ինչ վերաբերում է «Կյուրոպեդիային», ապա նա իր վերնագրով ինչպես և իր բովանդակությամբ, ամբողջովին նվիրված է մեդական իշխանության պարսկականի փոխարինման ժամանակաշրջանին, անկախ այն բանից, որ Քսենոֆոնի մոտ տարբեր ոգով է վերարտադրված այն։ Խորենացու Ա. գրքի հիշված գլխի բովանդակության ժամանակագրական դուգադիպումը Քսենոֆոնի «Կյուրոպեդիա» աշխատության հետ, օրինաչափորեն պահանջ է առաջացնում նույնացնել այդ երկու աշխատություններում հիշված անձերին, հատկապես հայ թագավորներին, այսինքն՝ Խորենացու Երվանդին ու Տիգրանին, «Կյուրոպեդիայում» հիշատակված Տիգրանի ու նրա հոր հետ։ Սակայն Խորենացու Ա. գրքի ԻԳ-ԼԱ. գլուխների բովանդակությունը մի շարք կետերում շեղվում է «Կյուրոպեդիայում» պահպանված տեղեկություններից։

Քսենոֆոնի քաղաքական այս վեպը դեռ վաղուց վերապահումներով է ընդունվել ուսումնասիրողների կողմից։ Բացասական տրամադրություններն առաջացել են հիշյալ երկի մեջ պահպանված ոչ ճիշտ տեղեկություններից, որոնք հայտնաբերվել են «Կյուրոպեդիան» այլ աշխատությունների, հատկապես Հերոդոտի պատմության 1-ին գրքի հետ համեմատելիս, որը պարունակում է մեդական պետության համառոտ պատմությունը, ինչպես նաև Աստիագեսի կրած պարտությունը Կյուրոսի կողմից ու պարսկական ցեղերի գերիշխանության հաստատման պատմությունը[1]։

Ըստ Հերոդոտի մեդական պատմության (I գիրք, բաժին 96 և հաջորդ) պարզվում է, որ Նինվեն գրավող ու լյուդիացիների հետ պատերազմող Կիաքսար թագավորից (633—585) հետո, նրան հաջորդում է որդին՝ Աստիագեսը, մեդացիների վերջին թագավորը։ Սրա աղջիկ Մանդանան ամուսնանալով պարսիկ ազնվական Կամբյուզեսի հետ, ունենում է մի որդի՝ Կյուրոսին, որը մեծանալով, պարսկական ցեղերի օգնությամբ, ապստամբվում է իր պապից և 550 թ. սրան պարտության մատնելուց ու գերի վերցնելուց հետո, որպես պարսկական գերիշխանության հիմնադիր դառնում է թագավոր։

Քսենոֆոնի «Կյուրոպեդիայի» հիմքում ընկած են, ամենայն հավանականությամբ, այլ աղբյուրներ։ Դրա համար էլ նա տարբերվում է Հերոդոտի պատմությունից[2]։ Նախ, այստեղ չկա Աժդահակի ու Կյուրոսի մեջ եղած հակամարտությունների մասին («Կյուրոպեդիա», գիրք III, գլուխ 3-րդ և հաջորդ), որոնց մասին նշվում է Հերոդոտի մոտ (գիրք I, 107, 108)։ Ապա, ըստ Քսենոֆոնի, Աժդահակի մահից հետո մեդացիների գահի վրա է բարձրանում Կիաքսարը (II-ը) («Կյուրոպեդիա», գիրք I, գլ. 5, ՀԵ), որը ոչ մի տեղ չի հիշատակվում որպես պատմական անձ, և որը Քսենոֆոնի հնարած անձնավորությունն է։ Վերջապես, իշխանության անցումը մեդացիներից պարսիկներին, կատարվում է ոչ թե բռնությամբ, ինչպես հաստատվում է մի

[1] Հերոդոտի տվյալները հիմնականում ընդունված են որպես ճիշտ պատմական արդի երկերում։ Տե՛ս օրինակ, A. T. Olmstead. The History of the Persian empire, Chicago. 1948, p. 34։

[2] Հերոդոտը (II, 95), հայտնելով իր ցանկությունը գրել Կյուրոսի մասին, ասում է, որ ինքը օգտագործելու է մի քանի պարսիկների պատմվածքներ, որոնք չեն ցանկանում չափից դուրս փառաբանել Կյուրոսին ու եղբայրակում է. «սակայն ես Կյուրոսի մասին գիտեմ ուրիշ երեք պատմվածքներ ևս. ըստ երևույթին սրանցից մեկին, որոնցից խորշել է հույների պատմահայրը, ծանոթ է եղել ու օգտագործել է նաև Քսենոֆոնը։

շարք տվյալներով, այլ խաղաղ ճանապարհով[1] ու «Կյուրոպեդիայի» վերջին գլխում Կյուրոսը հանկարծ հայտնվում է որպես թագավոր։

Ռենոֆոնի այդ աշխատության մեջ հայտնաբերված պատմական այս մի քանի անճշտությունները ավելորդ անգամ ապացուցում են, որ «Կյուրոպեդիան» հնարավոր է օգտագործել միայն այդ ժամանակաշրջանի պատմական եղելությունները ճիշտ պատկերող աշխատությունների հետ համեմատման մեջ դնելու եղանակով։

Խորենացու աշխատության 1-ին գրքի մեջ Տիգրան Երվանդյանի հետ կապված դեպքերը արդեն շատ ավելի մոտիկ են պատմական իրականությանը։ Հիմնական մոմենտը՝ մեդական իշխանության բոնի փոխարինումը պարսիկների իշխանությամբ, այստեղ հիանալի վերարտադրված է։ Միայն այն տարբերությամբ, որ այդ փոփոխության իսկական իրագործողը՝ Կյուրոսը, սավերի մեջ է թողնված, իսկ առաջին պլանի վրա է քաշված հայոց թագավոր Տիգրան Երվանդյանը։ Խորենացին պատմում է, որ Տիգրան Երվանդյանի ժամանակակից՝ Աժդահակ մարաց թագավորը չարագուշակ երազներ է տեսնում (գիրք Ա, գլ. ԻԵ, ԻԶ) (այնպես, ինչպես որ Հերոդոտի մոտ Աստիագեսին տանջում են վատ երազները I, 107, 108)։ Աժդահակին մտահոգում էր Տիգրանի ու Կյուրոսի դաշնակցությունը (Խորենացի, գիրք Ա, գլ. ԻԵ. «Կյուրոպեդիայում» Տիգրանը Կյուրոսի որսակիցն է ու ընկերը)։ Բայց նրա նենգ միջոցառումները անհետևանք են մնում, ու մի մեծ ճակատամարտում Տիգրան Երվանդյանը սպանում է անձամբ Աժդահակին (Խորենացի, Ա, ԻԵ), (Հերոդոտի մոտ Կյուրոսը պարտություն է մատնում Աժդահակին ու գերի վերցնում. 1, 128)։

Այդպիսով, Խորենացու «Հայոց պատմության» 1-ին գրքի համադրումը «Կյուրոպեդիայի» հետ ու այն երկու աշխատությունների համեմատումը Հերոդոտի հաղորդած տեղեկություններ հետ, ցույց է տալիս, որ մ. թ. ա. 6-րդ դարում Հայաստանում, որպես մեդացիների վերջին թագավորի՝ Աժդահակի ու պարսիկների առաջին թագավորի՝ Կյուրոսի ժամանակակիցներ գոյություն ունեին հայ-արմենների Երվանդ Առաջին՝ Սակավակյաց կոչվող «թագավորը» ու նրա որդի Տիգրանը, որը հաջորդում է իր հորը հայկական գահի վրա։

«Կյուրոպեդիայում» պահպանված մի շարք տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Աստիագեսի օրոք արմենների Երվանդ 1-ին թագավորը ապստամբվել էր ու պատերազմում էր մեդացիների դեմ (գիրք III, գլ. 1. 10)։ Սակայն Աստիագեսին հաջողվում է արմենների լեռները պաշարելուց հետո պարտության մատնել անհնազանդ «դաշնակցին» ու պարտադրում է նրան հարկ վճարել, ամրոցներ չկառուցել ու պահանջի դեպքում զորք տրամադրել մեդացիներին («Կյուրոպեդիա», գիրք II, գլ. 4, բաժին 13 և գիրք III, գլ. 1, բաժ. 6)։

Արմենների կողմից Աստիագեսին մուծված տարեկան հարկը 50 տաղանդ էր (նույն տեղում, գիրք III. գլ. 1, 34), իսկ զորքի քանակը, որը արմենները պետք է պատերազմի դեպքում ներկայացնեին մեդական թագավորին.

[1] Որ Աստիագեսը ուժի միջոցով է գահընկեց արվել Կյուրոսի կողմից, դա հաստատում է հենց ինքը Ռենոֆոնը, իր մի այլ աշխատության՝ «Անաբազիս»-ի մեջ (III գիրք. 4-րդ գլուխ, 8, 11, 12), երբ պատմում է այն մասին, թե ինչպես պարսիկները իշխանությունը խլեցին մեդացիներից, և թե ինչպես պարսից թագավորը պաշարեց Տիգրիսի շրջանում գտնվող մի մեդական քաղաք, որտեղ պատսպարվել էր մեդական թագուհին և այլն

հասնում էր 24.000-ի, որից 20.000 հեծեալ, իսկ 4000 ձիավոր («Կյուրոպեդիա». գիրք II, գլ. 1, բ. 6)։ Ըստ երևույթին արմենները շատ դուրեկան չէր «դաշնակցի» այս դրությունը[1], որովհետև այդ փաստորեն ենթադրում էր արմենների թագավորի կախվածությունը, թեկուզ և միայն արտաքին հարցերում։ Նկատի ունենալով այս հանգամանքը, պետք է ենթադրել, որ արմենները մասնակցեցին այն խռովությանը, որը Կյուրոսը նախապատրաստեց մեդացիների ու Աստիագեսի դեմ։

Արմենների ու Կյուրոսի մեջ կապող օղակի դեր էր խաղում, ըստ երևույթին, Երվանդ թագավորի որդի Տիգրանը, որը Կյուրոսի հետ լավ ծանոթ էր, հաճախ նրա որսակիցը լինելու պատճառով («Կյուրոպեդիա», գիրք II, գլ. 4, 45, գիրք III, գլ. 1, 44)։ Խորենացու մոտ ուղղակի ասված է, որ Աժդահակի մտահոգության պատճառը, դա Երվանդի որդի Տիգրանի ու Կյուրոսի միջև հաստատված դաշնակցությունն էր. «բայց էր նիւթ այսպիսւոյ խոհականութեան դաշնաւորութիւն մտերմութեանն՝ որ ի Կիւրոսէ առ Տիգրան»— ասում է պատմիչը (գիրք Ա, գլ. ԻԵ) և որ այդ օրերին շատ վտանգ էր սպառնում Մարաց Աժդահակին Կյուրոսի և Տիգրանի միաբանությունից (գիրք Ա, գլ. ԻՁ)։

Չնայած այն բանին, որ Խորենացին Աժդահակին տապալելու գործը վերագրում է Տիգրանին, այնուհանդերձ, սկզբից Տիգրանին պատկերում է որպես Կյուրոսին լոկ օժանդակողի («որ և Կիւրոսի աջակցեալ, զՄարացն ի բաց բառնալով զիշխանութիւն», գիրք Ա, գլ. ԻԴ)։

Այս ևս ի նկատի ունենալով, Հերոդոտի I գրքում (128-րդ գլ.) հաղորդած այն տեղեկության հիման վրա, ըստ որի մեդացիների ու պարսիկների ճակատամարտում մեդական բանակի մի մասը դավաճանեց, կարելի է ենթադրել, որ արմենական զորամասերը, որոնք պարտադիր կերպով մասնակցում էին մեդացիների ռազմական գործողություններին, այս դեպքում գտնվում էին նրանց շարքում և անցան Կյուրոսի կողմը ու նպաստեցին սրա հաղթանակին։

Մեդական պետության քայքայման հետևանքով արմենների Երվանդ թագավորը անկախ է դառնում, բայց կարճ ժամանակով։ Ինչպես մանրամասն պատմում է Քսենոֆոնը, Կյուրոսը իր զորքով արշավում է արմենների դեմ[2]։ Կյուրոսի ձեռնարկած ռազմական այս միջոցառումները արմենների դեմ շատ հավանական է, որ կատարված լինեն պարսկա-լյուդական պատերազմի կա-

---

[1] «Կյուրոպեդիայում» (գիրք II, գլ. 4, բ. 22) Կյուրոսը դիմելով մեդական ազնվականներին, ուղղակի հայտարարում է. «Արմենը առաջ դաշնակից էր ու հնազանդ Կիաքսարին»։ (Այս Կիաքսարը Քսենոֆոնի երևակայության ստեղծագործությունն է, ուրեմն այստեղ խոսքը Կյուրոսին նախորդող, մեդական ժամանակներին է վերաբերվում)։ Խորենացին ևս խոսելով Տիգրան Երվանդյանի մասին, հաղորդում է. «Սա նախ յառաջագոյն դաշնաւոր եղեալ Աշդահակայ, որ ի մարաց էր...» (գիրք Ա. գլ. ԻԴ)։

[2] Կյուրոսի այս գործողությունները Քսենոֆոնը պատկերում է Աստիագեսին հաջորդող մի ինչ որ Կիաքսարի թագավորության օրոք։ Արդեն առիթն ունեցել ենք ընդգծելու այն միտքը, որ այս Կիաքսարը, որպես պատմական անձնավորություն գոյություն չի ունեցել, հետևապես Աստիագեսի մահից հետո կատարված գործերի հեղինակը պարսկական կայսրության հիմնադիր Կյուրոսն է։ Ի միջի այլոց, Կյուրոպեդիայի Կիաքսարի ֆիկտիվ լինելու մասին կասկած է տալիս հենց ինքը՝ հեղինակը, որը նրան նկարագրում է որպես մի լալկանի, թույլ ու անկամ մի մարդու, որն ամբողջովին ստվերի մեջ է, այն ինչ Կյուրոսը օրվա հերոսը, փաստորեն թագավորն է։

պակցությամբ։ 547 թ. Կյուրոսը դուրս է գալիս Էկբատանից, անցնում է Միջագետք, այնտեղից՝ Հյուսիսային Ասորիք, գրավում է Նինվեն ու հավանորեն՝ նաև Խառանը։ Այնտեղից, Հյուսիսային Աիրիայի ու Կիլիկիայի վրայով անցնում է Կապադովկիա՝ Կրեսոսի դեմ։ Նինվեի ու Վերին Տիգրիսի շրջաններում գտնվելու ժամանակ է, որ Կյուրոսը հնազանդեցնում է Արմենիան[1]։

Կյուրոսի մոտենալու լուրը առնելով, ըստ Քսենոֆոնի ծաղկեցրած տեղեկությունների, արմենների թագավոր Երվանդը իր որդի Սարարիսի (Շավարշ) հետ փախչում է լեռները, բայց ստիպված վերադառնում է, գտավում Կյուրոսի կողմից, բայց անդրանիկ որդու՝ Տիգրանի միջնորդությամբ հայրը փրկվում է մահից (գիրք III, գլ. 4, 1—31)։ Երվանդը հպատակվում է Կյուրոսին մեդացիների թագավոր Աստիագեսի ժամանակ եղած պայմաններով (24.000 զորք մատակարարել և 50 տաղանդ տուրք), միայն այն տարբերությամբ, որ դրամական հարկը 50 տաղանդից բարձրացվում ու հասցվում է 400 տաղանդի (գիրք III, գլ. 4, 34)։ Քսենոֆոնի ասելով, Կյուրոսը կարգադրում է նաև արմենների ու խալդայների միջև եղած անհամաձայնությունների հարցը, վերջիններին ևս հպատակեցնելով իրեն (գիրք III, գլ. 2)։

Այս ձևով գործերը կարգավորելուց հետո Կյուրոսը հեռանում է և ուղևորվում լյուդիացիների դեմ, իր հետ տանելով նաև արմենական զորքեր (գիրք IV, գլ. 2, 10, գիրք IV, գլ. 3, 43, գիրք IV, գլ. 5, 1 և, 4, 3, գիրք V, գլ. 4, 27)։ Հայկական զորքը մասնակցում է Կյուրոսի մյուս արշավանքներին. այսպես օր. ա39 թ. Բաբելոնի դեմ։ Արմենական զորքը թվով 24.000 էր բաբելոնական այս արշավանքի, ինչպես և նախորդ արշավանքների ժամանակ, ու բաժանված էր երկուսի՝ արմենական հեծելազորին առաջնորդում էր Երվանդի որդի Տիգրանը (գիրք V, գլ. 3, 42), իսկ արմենական հետևակին՝ Էմվազը։

Այսպիսով, Կյուրոսը փաստորեն վերականգնում է Աժդահակի ժամանակ եղած դրությունը։ Զորքի մատակարարումը նույնն է, միայն հարկն է բազմապատկվում։ Դրությունը շատ չպետք է փոխված լիներ, երբ Քսենոֆոնի տված տեղեկությունների համաձայն, Բաբելոնն ու Լյուդիան նվաճելուց հետո, Կյուրոսը իր պետությունը բաժանում է սատրապություններ ու նշանակելով սատրապներին, որոշում է հարկի չափը ու զորքի մատակարարման քանակը (Կյուրոպեդիա, 8-րդ գիրք, 6-րդ գլ. 1, 8, 11)։ Իր մահից առաջ, Կյուրոսը Կամբյուզեսին նշանակում է հաջորդ, իսկ երկրորդ որդուն՝ Թանաոքսարեսին Մեդիայի, Հայաստանի ու Կադուսիայի սատրապ (Կյուրոպեդիա, գիրք 7, գլ. 14)[2]։

Ն. մ. թ. 6-րդ դարի Հայկական թագավորության տերիտորիան հնարավոր է որոշել։ Պետք է սակայն նշել, որ գոյություն ունեցող փաստերը թույլ չեն տալիս համաձայնվել ակադ. Մանանդյանի հետ, որը արծարծվող ժամանակաշրջանի Արմենիան տեղադրում էր հայկական լեռնաշխարհի հարավում, Ծոփքում, Աղձնիքում, Վանա լճի հարավակողմում։[3]

---

[1] Տե՛ս, Olmstead, էջ 39։

[2] Վերև շարադրված դեպքերի մասին տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, էջ 35 և հաջորդ։ И. М. Дьяконов, История Мидии, էջ 33—34, 42—44, 350—356։

[3] Տե՛ս «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատ. Ա, էջ 43։

Վերջին ուսումնասիրություններում ցույց է տրված, որ այդ թագավորության սահմանները շատ ավելի ընդարձակ են եղել[1]։

Հասկանալի է, որ ավյալ հարցի պարզաբանմանը որպես միակ աղբյուր կարող է ծառայել «Կյուրոպեդիան»։ Նրա մի շարք որոշակի տվյալները ամենայն ակնհայտությամբ ցույց են տալիս, որ Հայկական թագավորությունը սահմանակից էր Մարաստանին (տե՛ս գիրք II, գլ. 1, 6, – «Արմենները Մեդացիների սահմանակից», գիրք II, գլ. 4, 16 – Արմենիայի և Մեդիայի ընդհանուր սահմանի մասին, տես նաև գիրք II, գլ. 4, 20, 24)։ Երկու երկրների միջև սահմանը ամենայն հավանականությամբ, անցնում էր Հայկական լեռնաշխարհի արևելյան և հարավ-արևելյան հատվածներում։

Մյուս կողմից, Քսենոֆոնը հաղորդում է նաև արմենների մի այլ սահմանակից ժողովրդի՝ խալդայների մասին (տե՛ս գիրք III, գլ. 1, 34, ու գիրք III, գլ. 2, 1, 4)։ Սրանց տեղադրության հարցը ավելի բարդ է։ «Կյուրոպեդիայում» միայն ասվում է, որ նրանց բնակավայրերը լեռներում էին։ Քսենոֆոնի մյուս աշխատությունում՝ «Անաբազիսում» ևս, բացակայում է խալդայների երկրի կոնկրետ նկարագրությունը, թեպետ սրանք հիշատակվում են, երբ թվարկվում են այն ցեղերը, որոնց հույները հանդիպեցին իրենց նահանջի ժամանակ (տես գիրք VII, գլ. 8)։ Ավելի ուշ ժամանակաշրջանի հեղինակի՝ Դիոդորոս Սիկիլիացու մոտ մենք ունենք այն վկայությունը, ըստ որի Հայկական լեռնաշխարհի հյուսիսակողմում, Ֆասիս գետն (Արաքսի վերին հոսանքը) անցնելուց հետո, հույները մտան Խալդիական մարզը (գիրք XIV, գլ. 29)։ Մովսես Խորենացու տեղեկությունների համաձայն Պոնտոսի լեռներում էր գտնվում Խաղդիք մարզը (գիրք II, գլ. 76), որը անկասկած հանդիսանում էր խալդայների նախկին բնակավայրը։ Պետք է նշել նաև բյուզանդական բազմաթիվ հեղինակներին, որոնք Հայկական լեռնաշխարհի հիշված մասերը անվանում են Խալդիկա (Եվստաթեոս, Ստեփան Բյուզանդացի, Կոստանդին Ծիրանածին)[2]։ Այս մի քանի վկայությունները թույլ են տալիս տեղադրելու խալդայներին Փոքր Հայքի և Բարձր Հայքի լեռներում։ Այդ նշանակում է, որ նրանք սահմանակից էին Արմենիային հյուսիսից և հյուսիս-արևմուտքից[3]։ Այդպիսով ուրեմն, արմենական թագավորությունը, որը մի կողմից՝ Վանա և Ուրմիո լճերի միջև ընկած տարածություններում սահմանակից էր Մեդական պետությանը, իսկ մյուս կողմից Փոքր և Բարձր Հայքի լեռներում՝ խալդայական ցեղախմբերին, ընդգրկում էր, պետք է կարծել, Ուրարտական պետության հիմնական տերիտորիան։ Այս միտքը իր հաստատումն է գտնում ն. մ. թ. 6-րդ դարի վերջին և 5-րդ դարին վերաբերող մի շարք հետաքրքիր տվյալներում։ Պարզվում է, որ հին պարսկական սեպագիր արձանագրություններում Արմինա և Ուրարտու անունները որպես համադոր են գործածվում։ Ուրարտական պետության տերիտորիան արմենական քաղաքական նոր միավորման անունն էր ստացել, բայց

---

[1] Տես *С. Т. Еремян*, Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху, „Известия", 1948, № 11, стр. 34, 36 и *И. М. Дьяконов*, указ. соч., стр. 355.

[2] *Б. Б. Пиотровский*, История и культура Урарту, Ереван, 1944, стр 329.

[3] Եթե խալդայների նույնացումը խալիբների հետ ճիշտ համարենք, ապա առաջինների տեղադրությունը էլ ավելի հաստատուն է դառնում, այնքանով, որքանով այժմ պարզված է, որ խալիբները ապրում էին Ծորոխի ակունքներում, Պարիադրեսի լանջերին, այսինքն նույն Պոնտոսի լեռներում (տե՛ս *М. И. Максимова*, Античные города юго-восточного причерноморья, М.—Л., 1956, стр. 28—29).

երկու անուններն էլ զուգահեռաբար կիրառություն էին գտնում[1]։ Այդ նշանակում է, որ «Արմինա» անվան տակ, ենթադրվում էր Ուրարտական պետության հիմնական տերիտորիան, առնվազն Վանա լճի ամբողջ ավազանը, Տիգրիս գետի վերին հոսանքի շրջանները և Արևելյան Եփրատի (Արածանիի) հովիտը[2]։

Երվանդ II (ն. մ. թ. 5—4 դարերի շեմքին)

Քսենոֆոնի «Անաբազիս» աշխատության մեջ պարունակված են մի քանի կցկտուր տեղեկություններ 5-րդ դարի վերջի և 4-րդ դարի սկզբի Հայաստանի իշխանավորների մասին։ Համաձայն այդ տեղեկությունների Հայաստանի սատրապն էր Օրոնտեսը, որը պատկանում էր պարսկական բարձր ազնվականությանը և հանդիսանում էր Արտաքսերքսես II Մնեմոն պարսից արքայի փեսան։ Պատմիչը հիշատակում է նաև Օրոնտեսի տրամադրության տակ գտնվող սատրապական զորքի մասին, ինչպես նաև նրա դղյակ-ամրոցի մասին, որին հանդիպեցին հույները Կենտրիտես գետի անցումից ոչ հեռու (տե՛ս գիրք III, գլ. 5, 17, գիրք IV, գլ. 4 1—3)։ Այս տվյալներից մի քանիսին մենք հանդիպում ենք նաև ավելի ուշ շրջանի պատմիչի՝ Պլուտարքոսի մոտ (Արտաքսերքսես, XXXII)։

Կարևոր հանգամանք պետք է համարել այն փաստը, որ նույն այս Երվանդ-Օրոնտեսը հիշատակված է դեռևս անցյալ դարում Փոքր Ասիայի տերիտորիայի վրա հայտնաբերված երկու արձանագրություններում, որոնք համեմատաբար քիչ են օգտագործվել հայագիտության մեջ։ Արձանագրություններից մեկը փորագրվել է Պերգամոն քաղաքում և ժամանակակից է հենց իրեն Երվանդին[3]։ Այս արձանագրություններում հիշատակվում է Երվանդի հոր՝ Արտաշիրի անունը, ապա այն, որ նա հանդիսանում է Արտաքսերքսես II-ի փեսան, ինչպես նաև մի շարք այլ տվյալներ, որոնց մենք առիթ կունենանք անդրադառնալու ստորև։ Երկրորդ կարևոր արձանագրությունը, որտեղ նույնպես հիշատակվում է Երվանդը, փորագրված է Նեմրութ-դաղում, Կոմմագենի երկրի թագավոր Անտիոքոս I-ի կողմից, և վերաբերում է ն. մ. թ. I դարին[4]։ Անտիոքոսի նախնիների շարքում հիշատակվում է Երվանդը իր անվան հին պարսկական Արուանդ ձևով, բերվում է նաև հոր՝ Արտաշիրի անունը, ինչպես նաև նշվում է նրա՝ պարսից արքային ազգակից լինելու հանգամանքը։ Եթե Օրոնտեսի մասին, որպես Հայաստանի սատրապի, գոյություն ունեցող տեղեկությունները վերևում մեջբերվածներով սպառվում են, մենք ավելի տեղյակ ենք նրա ճակատագրին Հայաստանից դուրս[5]։

Ինչ-ինչ պատճառներով, 4-րդ դարի սկզբին Օրոնտեսը տեղափոխվում է Փոքր Ասիա, որտեղ նա ծավալում է բուռն գործունեություն։ Ըստ Դիոդո-

[1] Տե՛ս Դարեհի Բեհիստունի և Նակշիռուստեմի արձանագրությունները, ինչպես նաև Քսերքսեսի և Դարեհ II-ի ժամանակաշրջանի արձանագրությունները, Բ. Բ. Պիոտրովսկի, նշված աշխատութ., էջ 136։

[2] *С. Т. Еремян*, Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху, стр. 34.

[3] *Th. Reinack*, La dynastie de Commagène (L'Histoire par les monnaies). Paris, 1890, p. 236.

[4] *K. Humann*, O. Puchstein, „Reisen in Kleinasien und Nordsyrien", Berlin, 1890, p. 283, 304.

[5] Այդ մասին տես *Indeich* „Kleinasiatische studien" Marburg, 1892, p. 221 և 362—363 և *G. Miller*, Orontes, Pauly — Wissova, Real-Enzyklopedie, 35-ter Halbband Stutgart, 1939, pp. 1164—1166.

բոս Սիկիլիացու տվյալներին, Տիրիբազի հետ միասին նա պատերազմ է վարում Կիպրոսի Եվագորաս թագավորի դեմ 386—384 թթ.: Ապա նա նշանակվում է Մլուղիայի սատրապ, իսկ 362 թ. հիշատակվում է Պերգամոնի վերը մեջբերված արձանագրության մեջ՝ Արտաքսերքսես II-ի դեմ կազմակերպված սատրապական ապստամբության կապակցությամբ: Դատելով Տրոգուս Պոմպեոսի տվյալներից, 360 թ. Օրոնտեսը ետ է ստանում հայկական իր նախկին սատրապիան (prol. X): Հիշատակվում է Օրոնտեսը նաև 354 թ. Դեմոսթենեսի մի ճառում: Նրա կարիերան ավարտվում է 349 թ., երբ նա ապաստան է գտնում Հունաստանում և հաստատվում Աթենքում:

Ն. մ. թ. 5-րդ դարի վերջի հայկական սատրապության տերիտորիայի հարցը վերջնականապես լուծված չլինելով, այն զուրկ չէ որոշ հետաքրքրությունից: 6-րդ դարի հայկական թագավորության տերիտորիային անդրադառնալիս, մենք տեսանք, որ նա մի միասնական միավոր եղած պետք է լիներ: Մի միասնական երկրի մասին են խոսում հին պարսկական սեպագիր արձանագրությունները, որոնք հիշատակում են Արմինան (Ուրարտուն): Սակայն Հերոդոտի մոտ մենք արդեն ունենք վկայություն այն բանի մասին, որ Հայկական լեռնաշխարհը բաժանված է եղել երկու՝ 13-րդ և 18-րդ սատրապությունների միջև: Ըստ այդ հանրահայտ տեղեկության, 13-րդ սատրապությունը ընդգրկում էր Պակտիկան, արմենններին և նրանց հարևաններին մինչև ծով, իսկ 18-րդ սատրապությունը՝ մատիեններին, սասպելրներին և ալարոդ-ուրարտացիներին: Ուսումնասիրողները գտնում են, որ Հերոդոտի մոտ հիշատակված պարսկական կայսրության մեջ, այդ թվում նաև Հայկական լեռնաշխարհում, տեղի ունեցող վարչական փոփոխությունները կատարվել են Դարեհ 1-ի օրոք և որ նրանք վերաբերում են 500-ական թվականներին[1]:

Այդ փոփոխությունների իմաստն այն է, որ Հայկական լեռնաշխարհի արևելքում վարչական մի նոր միավոր էր ստեղծվել, հանձինս 18-րդ սատրապության: Նա՝ այդ միավորը, կամ Արմենիայից անջատված տերիտորիայի վրա էր առաջացել, կամ Դարեհի օրոք Աքեմենյանների գերիշխանությունը տարածվել էր Հայկական լեռնաշխարհի դեռևս չգրավված շրջանների վրա: Չնայած այն բանին, որ երկու սատրապությունների և նրանց կազմի մեջ մտնող ցեղերի ու ժողովուրդների տեղադրման հարցը վիճելի է, այնուամենայնիվ հնարավոր է առաջարկել այդ հարցի հետևյալ լուծումը: 13-րդ սատրապությունը ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհի բուն տերիտորիան գլխավորապես 6-րդ դարի Արմենիան, իսկ 18-րդ սատրապությունը՝ Հայկական լեռնաշխարհի արևելյան մասերը, որոնք դեռևս չէին ներդրավված հայ ժողովրդի կազմավորման պրոցեսի մեջ[2]:

Այս կապակցությամբ ուզում ենք նշել, որ հնագիտական աշխատանքները, որոնք Պատմության ինստիտուտը տանում է Երևանի հարավ-արևելյան ծայրամասում գտնվող ուրարտական Էրեբունի (Արինբերդ) բլրում, կարող են որոշակի առնչություն ունենալ 18-րդ սատրապության և հատկապես նրա վարչա-ռազմական կենտրոնի տեղադրման հարցերի հետ: Պեղումների ժամանակ ի հայտ բերվեցին մի շարք նյութեր, որոնց ժամանակագրական կերպարը առնչվում է հետուրարտական էպոխայի նյութական կուլտուրայի հետ, մի հանգամանք, որը հնարավորություն տվեց Բ. Բ. Պիոտրովսկուն ենթադրելու,

[1] Ս. М. Дьяконов, История Мидии, стр. 340, 343.

[2] Նույն տեղում, էջ 355—356:

որ բերդում կյանքը շարունակվել է նաև աքեմենյան ժամանակաշրջանում։ Այդպիսի նյութերի շարքում պետք է հիշել հուլունքները, ձիու սանձը, խեցեղենի մի մասը, նետի սլաքները և հատկապես 5-րդ դարի միլեթյան երկու արծաթե դրամներ[1]։ Առանձնապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում այս տեսակետից Արինբերդի ճարտարապետական հուշարձանները։ Պեղումների ընթացքում բացված սյունազարդ դահլիճի ուսումնասիրությունը պարզորոշ տարբերում է կառուցողական երկու շրջան[2]։ Առաջին, ուրարտական շրջանին է վերաբերում երկու շարքանի սյուներով երկարավուն սրահը, որը կառուցողական երկրորդ՝ հետուրարտական, աքեմենյան ժամանակաշրջանում վերափոխվել է մեծ քառանկյունի 6×5 սյուներով դահլիճի։ Շատ հավանական է, որ հատակագծային իր առանձնահատկություններով այս դահլիճը ձայնակցում է աքեմենյան ընդունասրահների՝ ապադանա-ապարանքների հետ։

18-րդ սատրապության ստեղծման կապակցությամբ ուրարտական նախկին ամրոց Էրեբունին, ամենայն հավանականությամբ, դառնում է սատրապի գլխավոր նստատեղին, որտեղ կայսրության մայրաքաղաքների (Մուդա, Պերսեպոլիս և այլն) ճարտարապետական կոթողների օրինակով կառուցվում է սյունազարդ դահլիճը։

Երբ քննության առնենք Քսենոֆոնի «Անաբազիս» աշխատության տվյալները 5—4-րդ դարերի շեմքին Հայաստանի տերիտորիայի մասին, ապա անպայման պետք է հաշվի առնենք վերևում բերված մի քանի դիտողություններ 6 դ դարի Հայաստանի տերիտորիային վերաբերվող։ Այդ չի նշանակում սակայն, որ 6-րդ դարի վերջերից մինչև 5-րդ դարի վերջերը Հայաստանի վարչա-տերիտորիալ կազմի մեջ փոփոխություններ տեղի չեն ունեցել։ Ընդհակառակը, հայ ժողովրդի կազմավորման պրոցեսի ծավալումը թելադրում էր, ըստ մեր կարծիքի, նորանոր փոփոխություններ մտցնել տերիտորիալ կառուցվածքի մեջ։ Ընդհանրապես, պետք է նկատել, որ Աքեմենյանների քաղաքականությունը սատրապությունների նկատմամբ, զուրկ չի եղել որոշ ճկունությունից։ Այդ է պատճառը, որ պատշաճ մոմենտին այս կամ այն սատրապությունը տրոհվել է մասերի, կամ, ընդհակառակը, մի քանի սատրապություններ միացվել են իրար մի միավոր ստեղծելու նպատակով։ Նկատի ունենալով այս ամենը, համոզեցուցիչ չի թվում Հերոդոտի նշած 13-րդ սատրապության մեխանիկ նույնացումը Քսենոֆոնի «Արևմտյան Հայաստանի հետ և Հերոդոտի 18-րդ սատրապությունը Քսենոֆոնի, այսպես կոչված, Արևելյան Հայաստանի հետ»[3]։ Խոսքը միայն նրա մասին չէ, որ ժամանակի տեսակետից արդեն, Հերոդոտի մոտ հիշատակվող, 5-րդ դարի սկզբներին վերաբերող, տերիտորիալ միավորները չէին կարող համընկնել Քսենոֆոնի ժամանակաշրջանի միավորների հետ։ Մեզ թվում է, որ անցած 100-ամյակում բուն վարչա-տերիտորիալ կառուցվածքում կատարվել էին նշանակալի փոփոխություններ։

Նախ, անհավանական է, որ Հերոդոտի 13-րդ և 18-րդ սատրապություն-

[1] Մ. Խոսրովյան, Արինբերդի susi տաճարը և նրա արձանագրությունները, «Տեղեկագիր», 1937, № 9։

[2] И. М. Лосева. Раскопки цитадели урартского города Ирпуни Ксимк. № 58, Москва, 1955, стр. 47—50

[3] Տե՛ս K. Lehman-Haupt,. „Satrap" Pauly's Real-Enzyklopädie der classischen Altertumswissenschaft, Neue Bearbeitung, zweite Reihe III Hb. Stuttgart, 1924, p. 1:8 և И. М. Дьяконов. История Мидии, էջ 355—356։

ների տերիտորիանները համընկնելու Քսենոֆոնի Արևմտյան և արդի ուսումնասիրողների կողմից հորինված «Արևելյան» Հայաստանների տերիտորիաների հետ (Քսենոֆոնի մոտ հիշատակվում են Արևմտյան Հայաստան և Հայաստան ընդհանրապես)։ Վերցնենք, օրինակ, 18-րդ սատրապությունը և այսպես կոչված «Արևելյան» Հայաստանը։ Եթե 18-րդ սատրապությունը իսկապես տեղադրվում է Հայկական լեռնաշխարհի ամենաարևելյան հատվածներում, ապա «Արևելյան Հայաստանը», ինչպես պարզորոշ բիում է Քսենոֆոնի՝ հույների նահանջի նկարագրությունից, ընդգրկում էր լեռնաշխարհի գերազանցապես հարավային շրջանները (օր. Վանից հարավ) և նույնիսկ հարավ-արևմտյան այնպիսի մի հատված, ինչպիսին «Տիգրիսի ակունքների շուրջը գտնվող տերիտորիան»[1]։

Այդ պատճառով էլ, նույնիսկ, եթե մենք պաշտպանենք Քսենոֆոնի ժամանակներում երկու՝ իրարից որոշակիորեն սահմանազատվող միավորների մասին գոյություն ունեցող տեսակետը, ապա պետք է ընդունենք, որ Հայկական լեռնաշխարհի տերիտորիան նրանց մեջ է բաշխվել այլ կերպ, քան 13-րդ և 18-րդ սատրապությունների մեջ։ Սակայն, մեզ թվում է, որ ավելի ճիշտ են նրանք, ովքեր կարծում են, որ Քսենոֆոնի ժամանակ գոյություն ուներ ինչպես 6-րդ դարի թագավորության օրերին մի միասնական Արմենիա, որի ենթաշրջանն էր Արևմտյան Հայաստան կոչված միավորը[2]։ Այս հարցում ելնում են նախ այն փաստից, որ Օրոնտեսի իշխանության տակ գտնվող տերիտորիան (չհաշված Արևմտյան Արմենիան) ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհի նշանակալից մասը (նրա հարավային կեսը՝ Վանի ավազանը, Տիգրիսի ակունքները, Ծոփքը, Կոմմագենը և շատ հավանական է նաև Հայկական լեռնաշխարհի արևելյան շրջանները, ըստ երևույթին 18-րդ սատրապության հիմնական տերիտորիան)։ Իզուր չէ, որ Քսենոֆոնը շեշտում է Օրոնտեսին պատկանող երկիրը ընդարձակ լինելու մասին (տե՛ս «Անաբազիս», գիրք III, գլ. 5,17)։ Հնարավոր էր, ուրեմն, որ Օրոնտեսին ենթարկվեր ամբողջ լեռնաշխարհը, ոչ միայն նրա մեծ մասը։ Այդ մասին է ակնարկում նաև Քսենոֆոնի այն վկայությունը, որ Օրոնտեսը իշխում է Արմենիայի վրա ընդհանրապես, և ոչ թե ինչ որ նրա մի մասի վրա («Անաբազիս», նույն տեղ)։ Բուցն այստեղ Արմենիա անունը ունի այն լայն առումը, որ գործածական էր Քսենոֆոնի մյուս «Կյուրոպեդիա» աշխատության մեջ կամ Աքեմենյան արձանագրություններում։

Հաշվի էր առնվում նաև այն տարբերակումը, որ Քսենոֆոնը անց է կացնում Օրոնտեսի և Տիրիբազի պաշտոնները անվանելիս (առաջինին նա անվանում է սատրապ, երկրորդին հյուպարքոս) և ի նկատի ունենալով պարսկական պաշտոնյաների հիերարխիայում գոյություն ունեցող տարբերությունները, եզրակացնում էին, որ Տիրիբազը ստորադասված էր երկրի ընդհանուր կառավարչին՝ Օրոնտեսին։ Վերջապես, պարսկական կայսրության մեջ

[1] Նշված հանգամանքը հերքում է «Արևելյան Հայաստանի» գոյության հնարավորությունը։ Տե՛ս այդ մասին, *E. Honigmann*, Kommagene, Pauly's Real-Enzyclopedie der Klas ischen Altertumswissenschaft, Supplementband, IV, p. 1980, նաև *Г. Тираян*, Страна Коммагена и Армения, „Известия", 1956, № 3, стр. 72.

[2] *O. Leuze*, Die Satrapieneinteilung in Syrien und im Zweistromlande von 530—320. Halle, 1935, pp. 172, 181. և Հ. Մանանդյան, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության*, Երևան, 1944, էջ 65։

երկուսի գրված գիրքերի բազդատումը Օրոնտեսի օգտին էր խոսում, որպես ավելի նշանավորի։ Ահա այս մի քանի հանգամանքները կարծես թույլ են տալիս ենթադրելու, որ 5-րդ դարի վերջին վերականգնվել էր միասնական Արմենիան, որի ընդհանուր իշխանավորը հանդիսանում էր Օրոնտեսը[1]։ Դրա հետ մեկտեղ այդ Արմենիայում ստեղծվել էր մի ենթաշրջան «Արևմտյան Արմենիա», որի կառավարիչն էր Օրոնտեսի ստորադաս Տիրիբազը։ Այս նոր միավորը, պետք է ենթադրել, հանդիսացավ ապագա Փոքր Հայքի տերիտորիալ հիմքը։

Երվանդ III (Ն. մ. թ. 4-րդ դարի երկրորդ կես)

Հին Հայաստանի պատմության Ն. մ. թ. 4-րդ դարի առաջին կեսը կատարյալ մթության մեջ է։ Քսենոֆոնի 5-րդ դարի վերջերին և 4-րդ դարի սկզբներին վերաբերող հանրահայտ տեղեկություններից հետո, մենք ոչ մի տրվյալ չունենք հաջորդ տասնամյակների մասին։ Միայն Արտաքսերքսես 3-րդ Օխոսի (358—338) պարսկական թագավորի գործունեությունը սկզբնաղբյուրներում շարադրելու կապակցությամբ հայտնի է դառնում, որ Հայաստանի սատրապն այդ ժամանակ ոմն Կոդոմանոսն էր, ապագա Դարեհ թագավորը, որը կադուսիացիների դեմ մղվող պատերազմում ցուցաբերած քաջագործությունների դիմաց ստացել էր հայկական սատրապիան (Justin, գիրք X, գլ. 3)։ Երբ Կոդոմանոսը 336 թ. հռչակվեց թագավոր, Հայաստանի սատրապի պաշտոնում նրան փոխարինեց 400-ական թ. Հայաստանի իշխանավոր Օրոնտեսի որդին կամ թոռը։ Նա նույնպես կրում էր Օրոնտես անունը և ինչպես տեղեկացնում է մեզ Արրիան պատմիչը (գիրք 3-րդ, 5, 8) Միթրաուսթեսի հետ միասին հանդիսանում էր հայկական զորքի հրամանատարը Արբելայի ճակատամարտում (334 թ.)։ Ինչպես ցույց է տվել ակադ. Մանանդյանը, կան բոլոր հիմքերը պնդելու, որ Աքեմենյան կայսրության փլուզումից հետո, 331—330 թթ. Օրոնտես սատրապը իրեն հայտարարեց Հայաստանի անկախ կառավարիչ[2]։ Այդպիսին նա շարունակեց մնալ նաև հաջորդ տարիներին։ Այդ մասին են ակնարկում Դիոդորոս Սիկիլիացին (գիրք 19-րդ գլ. 23) և Պոլիենը (գիրք 4-րդ, 8), որոնք Օրոնտեսին հիշատակում են 317 թ., դիադոխների պատերազմների կապակցությամբ։

Շատ հնարավոր է, որ Դիոդորոսի մոտ հիշատակված Արդոատես թագավորը (գիրք 31-րդ, գլ. 19), որի օգնությամբ Արիարաթ II-ը բարձրացավ Կապադովկիայի գահի վրա 301 թ.[3], հանդիսանում էր նույն Օրոնտեսը, որը

[1] Ըստ երևույթին, օգտվելով Արմենիայի ընդհանուր իշխանավորի իրավունքներից է, որ Օրոնտեսը հրավիրել էր վարձկան խալդայներին իր բանակի մեջ, եթե նկատի ունենանք, որ վերջինները սահմանակից էին, պետք է կարծել, միայն Տիրիբազի Արևմտյան Հայաստանին։

[2] Տե՛ս «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատ. Ա, էջ 93—97։

[3] Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, տե՛ս էջ 98, անվան տարբեր մեկնաբանությունների մասին։ Արոանդ-Երվանդ կարդալն են առաջարկում Մարկվարտը, Դրոյզենը, նաև ինքը՝ Մանանդյանը։ Ավելացնենք նաև Ադոնցի „Histoire de l'Arménie", էջ 330։ Ինչ վերաբերում է թագավորական տիտղոս, ապա նա պահպանվել է այս դինաստիայում նաև հաջորդ ժամանակներում (օր. համեմատիր Անտիոքոս Կոմմագենցու նախնիների ցուցակը Նեմրութ-դաղի արձանագրության մեջ K. Human, O. Puchstein, հիշվ. աշխ., էջ 286 և հաջորդ, տե՛ս նաև Արմավիրի № 4 արձանագրությունը, К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л. 1954, стр. 134.

ընդունել էր թագավորական տիտղոս, որպես հետևանք Հայաստանի հասարակության ներքին զարգացման, որը պահանջում էր պետական իշխանության նոր, ավելի բարդ ձևեր, ինչպես նաև Առաջավոր Ասիայի քաղաքական կյանքի կայունացման շնորհիվ, որը հանգեց հելլենիստական միապետությունների ձևավորմանը և ստեղծմանը։

Նեմրութ-դաղի Անտիոքոս Կոմմագենացու հիշված արձանագրությունը ևս խոսում է այն բանի օգտին, որ 4-րդ դարի վերջին Հայաստանում իշխում էր Արուանդ (Օրոնտես, Երվանդ) թագավորը, մի փաստ, որը չէր հակասում երկրի զարգացման ընդհանուր տենդենցին, և որը հաստատում է Դիոդորոս Սիկիլիացու տվյալները։

Զարմանալի հետաքրքիր է, որ Օրոնտեսը՝ Հայաստանի կառավարիչը 4-րդ դարի երկրորդ կեսում հիշատակվում է նաև Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ։ Նշելով, որ Սանատրուկ թագավորի մահից հետո Հայաստանում ծագեց խառնաշփոթություն, նա գրում է, «քանզի Երուանդ ոմն, որդի կնոջ Առշակունւոյ, թագաւորէ յութերորդ ամի Դարեհի վերջնոյ» (գիրք Բ, գլ. լէ (37)։ Այնքանով, որքանով Խորենացու Դարեհ վերջինը հանդիսանում է Աքեմենյան վերջին թագավոր Դարեհ Կոդոմանոսը, որին դահընկեց արեց Ալեքսանդր Մակեդոնացին, ապա նույն Խորենացու Երվանդը ոչ այլ ոք է, քան սատրապ Օրոնտեսը, որը մասնակցել էր Արբելայի ճակատամարտին, դարձել էր անկախ Հայաստանի կառավարիչ և ապա թագավոր։

Ինչ վերաբերում է ն. մ. թ. 4-րդ դարի վերջի Հայաստանի տերիտորիային, ապա նա մոտավորապես պետք է համընկներ Քսենոֆոնի ժամանակաշրջանի Հայաստանի տերիտորիայի հետ, և պետք է ընդգրկած լիներ Կոմմագենը, Ծոփքը, Ադձնիքը, Վանա լճի ավազանը, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և արևելյան մի շարք շրջաններ։ Դուցե նշված ժամանակաշրջանի համար ավելի շատ հիմքեր գտնվեին Այրարատը ևս ն. մ. թ. 4-րդ դարի վերջի Արմենիայի կազմի մեջ համարելու համար։ Այդ դեպքում հավանական է, որ Արմենիայի մայրաքաղաքը լիներ Արմավիրը։ Ինչպես հայտնի է, այդ բանի մասին հեռավոր արձագանքներ են պահպանվել պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ։ Ինչ վերաբերում է ընդհանուր Արմենիայի ենթաշրջան «Արևմտյան Հայաստանին», որի կառավարիչը, ամենայն հավանականությամբ արդեն հիշատակված Միթրաուստեսն էր, ապա հնարավոր է, որ անջատվելով, նա կազմեց մի ուրույն միավոր, որին հին աշխարհի պատմիչները հիշում են Փոքր Հայք անվան տակ։

Հայաստանի ն. մ. թ. 3-րդ դարի, հատկապես նրա առաջին կեսի պատմությունը նույնպես անծանոթ է մնում մեզ։ Փաստերը թույլ են տալիս բացահայտելու առայժմ երկու գործոն, որոնք ավել կամ նվազ չափով պայմանավորում են երկրի զարգացումը տվյալ ժամանակաշրջանում։ Մեկը, դա երկրի սոցիալ-տնտեսական զարգացման անհավասարությունը, անհամաչափությունն էր, մյուսը՝ Սելևկյան աշխարհակալ պետության դրացիությունը, որի անբարենպաստ ազդեցությունը Երվանդունիների պետության գոյության վրա իրեն հատկապես զգացնել տվեց։ Այսպես, օրինակ, Հայաստանի հարավարևմտյան շրջանները՝ Ծոփքն ու Կոմմագենը, ներգրավվելով Առաջավոր Ասիայի հելլենիստական երկրների տնտեսական վերելքի շարժման մեջ, անջատվեցին և կազմեցին մի առանձին պետություն, որի մայրաքաղաքն էր Սամոսատը և ապա Արշամաշատը և թագավորները Երվանդունիների դի-

նաստիայից էին[1], որի մյուս ճյուղը շարունակում էր իշխել Այրարատում և մի շարք այլ շրջաններում։ Մյուս կողմից, ն. մ. թ. 2-րդ դարի կեսին վերաբերվող փաստերը ցույց են տալիս, որ Սելևկյանները ակտիվացնելով իրենց քաղաքականությունը Հայաստանում, հաստատվել էին նրա տերիտորիայի մի շարք հատվածներում և ստեղծել այնտեղ իրենց ենթակա մարզեր-սատրապություններ։ Այս պայմաններում արևելյան Երվանդունիների տիրույթները, պետք է ենթադրել, համընկնում էին Այրարատ նահանգի տերիտորիայի հետ։ Այդ մասին են վկայում Մ. Խորենացու տեղեկությունները, ինչպես նաև տեղագրական տվյալները։

Երվանդ IV, վերջին (3-րդ դարի վերջ, 2-րդ դարի սկիզբ)

Այս իշխանավորի մասին հանգամանորեն է խոսում Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» Բ գրքի լէ (37)—խթ (49) գլուխներում։ Ինչպես ակադ. Մանանդյանն է ցույց տվել, Խորենացին այստեղ սխալմամբ պատկերում է մ. թ. 1-ին դարի Արշակունիների ցեղից մի ինչ որ Երվանդի, այնինչ խոսքը Արտաշես I-ին նախորդող Երվանդունիների ներկայացուցչի մասին է, որին պատմահայրը շփոթել է Եղեսիայի Արգար թագավորի որդի Արբանդեսի հետ[2]։ Հույն աշխարհագիր Ատրարոնը ևս իր աշխատության Հայաստանին նվիրված գլխում (գիրք 11-րդ) համառոտ, բայց կարևոր ցուցումներ է տալիս Երվանդ վերջինի ու Արտաշես I-ի մասին։

Թվում է, թե նույն այս ժամանակաշրջանին են վերաբերում Արմավիրում գտնված հունարեն արձանագրությունները, որոնք ակադ. Մանանդյանը ուղղակի Երվանդ վերջինի հետ է առնչված համարում[3]։

Երվանդի թագավորության տարիները նշանավորվեցին շինարարական այն գործունեությամբ, որ ծավալվեց Այրարատում։ Հեռանալով Արմավիրից, — հայկական Երվանդյան պետության հնագույն մայրաքաղաքից — Երվանդը տեղափոխվում է Ախուրյանի ու Արաքսի միավորման տեղը, որտեղ «միակտուր ապառաժ բլուրի վրա» կառուցում է իր նոր մայրաքաղաք Երվանդաշատը (գիրք Բ, գլ. Լթ)։ Երվանդ վերջինի շինարարական գործունեության հետ կապված պետք է լինեն նաև Երվանդակերտ ձեռակերտի, Երվանդական ավանի, Բաղարան սրբավայրի կառուցումը։

Մայրաքաղաքի տեղափոխումը Արմավիրից Երվանդաշատ, իհարկե, միայն կլիմայական պատճառներով չի բացատրվում, ինչպես ուզում է մեզ հավատացնել Խորենացին (գիրք Բ., գլ. լթ)։ Ակադ. Մանանդյանի կարծիքով այստեղ ավելի լուրջ պատճառներ էին իրենց զգացնել տալիս, ամենից առաջ քաղաքական կարգի, որոնք բխում էին Երվանդ—Արտաշես մրցակցությունից։ Սելևկյան Անտիոքոս III թագավորի սատրապ Արտաշեսի գոյությունը, որը, պետք է ենթադրել, կառավարում էր Վանա լճի ավազանում և Արածանիի վերին հոսանքում, նշանակում էր, որ վաղ թե ուշ Հայաստանի տիրոջ հարցը պետք է մեկի կամ մյուսի օգտին վճռվեր։

Ինչպես կարելի է հետևցնել Ատրարոնի երկու կարևոր վկայություններից (11 գիրք, գլ. 14, բաժ. 5 և 15), Արտաշեսը արդեն 189 թ. առաջ,

[1] *Г. Тирацян*, Страна Коммагена и Армения. „Известия", 1976, № 3, стр. 73.

[2] „О торговле и городах Армении", էջ 96—98, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատ. Ա, էջ 126—127, «Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ», էջ 27։

[3] «Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ»։

[4] «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատ. Ա, էջ 126—127։

այսինքն, Սելևկյանների պարտվելու հետևանքով թագավոր դառնալուց առաջ, նվաճել էր Այրարատը ու Երվանդ IV-ի սպանությամբ վերջ տվել Երվանդյան դինաստիային։ Ըստ Խորենացու տվյալների, Արտաշեսը Ուտիքի վրայով, Սևանի հյուսիս-արևելյան ափով ու Արագածի թիկունքով, շարժվում է Երվանդի բանակի դեմ, որը դտնվում էր Երվանդաշատից 300 ասպարեզ հեռավորության վրա, Ախուրյանի հյուսիսային կողմերում (գիրք Բ., գլ. ԽԵ, ԽԶ)։ Ճակատամարտ տեղի ունեցավ Երվանդական վայրում ու Երվանդի բանակը խիստ պարտություն կրեց։ Երվանդը փախուստի դիմեց դեպի իր մայրաքաղաքը, այնտեղ պատսպարվելու համար։ Արտաշեսի զորավար Ամրատը (գրվար է ասել, թե արդյոք նա Ն. մ. թ. 2-րդ դարի դեմք է) հետապնդելով նրան, գալիս է ու պաշարում Երվանդաշատը։ Այստեղ նրան միանում է Արտաշեսը, որը տիրացել էր արդեն Երվանդի դաստակերտին՝ Երվանդակերտին։ Արտաշեսի բանակը լցվում է քաղաք, իսկ զինվորներից մեկը վագրով սպանում է Երվանդին, որը թագավորել էր 20 տարի (Խորենացի, գիրք Բ., գլ. ԽԶ). դրանից հետո Արտաշեսը լիկվիդացնում է Երվանդյան իշխանության վերջին ճնացորդը, գրավելով Բագարանը ու սպանելով Երվանդի եղբորը՝ Երվազին։ Շատ հնարավոր է, որ Սևանի շրջանում հայտնաբերված արդեն 5 արամեատառ կոթողները ուղղակի առնչություն ունենան Արտաշես-Երվանդ մրցակցության տարբեր հանգամանքների հետ։ Արտաշեսի անունից փորագրված այս արձանագրությունների մեկնաբանումը վերջնական չլինելով հանդերձ, թույլ է տալիս առաջարկել նրանց ըմբռնման հետևյալ վարիանտը։ Եթե արձանագրության մեջ հիշատակվող բավանդական-երվանդական տերմինը վերաբերում է Արտաշեսին, ապա դա չափազանց հետաքրքիր մի փաստ է Երվանդի ու Արտաշեսի միջև թշնամանքի գոյության պայմաններում։ Այս դեպքում պետք է ենթադրել, որ հռչակելով իրեն Երվանդունի, Արտաշեսը ձգտել է տալ իր արարքին քիչ թե շատ օրինական բնույթ, նվազեցնել իր հանդեպ ստեղծված աննպաստ տպավորության չափերը, միևնույն ժամանակ հռչակել իր թագավորական ծագումը (այնքանով, որքանով ինքը թագավորական տոհմից չէր սերվում, իսկ Երվանդ վերջինը և իր նախորդները թագավորական տիպոս էին կրում) և ի վերջո՝ հայտարարել Երվանդունիների միջնորդությամբ իր և Աքեմենյանների երբեմնի հզոր տոհմի ազգակցական կապերի մասին[1]։

Պետք է նշել, որ Ն. մ. թ. VI-II դարերի պատմության կարևոր հարցերը, կապված Հայաստանի տերիտորիայի և Հայաստանում իշխող դինաստիայի հետ, դեռ չեն դարձել իրենց վերջնական լուծումը։

Այժմ դեռ դժվար է պնդել ամենայն վճռականությամբ, որ նշված ժամանակաշրջանում Հայաստանում իշխում էր անընդմեջ մի միասնական դինաստիա։ Այդ դինաստիայի ծագման մասին գոյություն ունեցող փաստերը կարելի կլինի բաժանել երկու խմբի։ Առաջին խմբին են վերաբերում բոլոր այն վկայությունները, որոնք Երվանդունիներին այս կամ այն կերպ սերված են համարում Աքեմենյաններից կամ նրանց մերձավորներից։ Հայտնի է, օրինակ, Երվանդ IV վերջինի մասին Սարբարոնի վկայությունը, ըստ որի նա սերված է համարվում Դարեհ I-ի զինակիցներից մեկից՝ Հիդարնեսից։ Կա-

[1] Այս մասին տե՛ս Գ. Տիրացյան, Արտաշես I-ի նորագյուտ արձանագրությունը, «Տեղեկագիր», 1957, № 10։

ռեոր է այս տեսակետից նաև Կոմմագենի Անտիոքոս թագավորի արձանագրությունը այնքանով, որքանով Երվանդունիները մտցված են Դարեհ I Աքեմենյանի հաջորդների ցանկի մեջ։ Սակայն պետք է նշել, որ այստեղ կա նաև այն վկայությունը, որ Երվանդը (II-ը), հանդիսանալով Արտաքսերքսես II Մնեմոնի փեսան, ագդակից էր Աքեմենյաններին ամուսնությամբ։ Այս տեսակետից արձանագրությունը լիովին համընկնում է Տսենոֆոնի, Պլուտարքոսի ինչպես նաև Պերգամոնի արձանագրության տվյալների հետ։ Եթե ի մի բերենք վերը հիշատակված բոլոր վկայությունները, ապա կարելի կլինի անել նախնական հետևյալ հետևությունը։ Երվանդ II, III և IV ծագում են Ն. մ. թ. VI դարի երկրորդ կեսում ապրող անձնավորությունից՝ Հիդարնեսից, և ամուսնական կապերի մեջ են եկել Աքեմենյանների տոհմի հետ։ Երվանդունիների Աքեմենյան ծագում ունենալու տեսակետը դուրկ չէ, անկասկած, պատմական ոեալ հիմքերից, բայց պետք է ենթադրել, որ նա, ամեն տեսակետից, հատկապես ընդգծվում և առաջացվում էր։ Այս հանգամանքը իր բացատրությունն ունի Առաջավոր Ասիայում աքեմենյան տրադիցիաների կենսունակության մեջ։ Պատահական չէ, օրինակ, որ Փոքր Ասիայի իշխանավորներից շատերը իրենց ծագումը բերում հայացնում էին Աքեմենյաններից որևէ մեկին[1]։

Երվանդունիների ծագմանը վերաբերող փաստերի երկրորդ խումբը պակաս հետաքրքիր չէ։ Նա կապված է Ն. մ. թ. VI դարի առաջին կեսին, Հայաստանում իշխող Երվանդ Սակավակյաց թագավորի անվան հետ։ Եթե տվյալ նույնությունը (մեզ հայտնի չորս Երվանդների) համարենք ապացույց մի միասնական դինաստիայի գոյության մասին, ապա կասկած չի կարող լինել, որ այս դեպքում Երվանդունիների դինաստիան իր ծագումը առնում է դեռևս ուրարտական ժամանակաշրջանից, մեդա-արմենական միջավայրից։ Ուրարտական պետության կործանումից հետո, ստեղծվում է Երվանդունիների հայկական թագավորությունը, իսկ թագավոր է դառնում Երվանդ Սակավակյացը, ապա Տիգրանը։ Աքեմենյանները, ոչնչացնելով Հայկական պետությունը, հավանական է, որ երկրի կառավարումը հանձնում են Երվանդունիների տոհմից ելածներին, Երվանդ I-ի հաջորդներին, որոնք հանդես են գալիս արդեն որպես կայսրության սատրապներ։ Նրանք ուժեղ կերպով պարսկականացած լինելով, վերածվում են երբեմն կայսրության նշանակության պաշտոնյաների, ինչպես ցույց է տալիս Երվանդ II-ի օրինակը։ Նրանց հեղինակությունն ու դերը բարձրանում է այն կապակցությամբ, որ Երվանդ II-ը ամուսնանում է արքայից արքայի աղջկա՝ Ռոդոգունայի հետ։ Փաստերի այս երկրորդ խմբից բխող հետևությունները, մի միասնական դինաստիայի գոյության մասին, վերջնական չի կարելի համարել։ Դեռևս պետք կլինի հաղթահարել այդ հետևությանը հակադրվող երկու տվյալներ՝ Պերգամոնի, բազմիցս հիշատակված արձանագրության տեղեկությունը Երվանդ II-ի բակարիական ծագման մասին և Սարաբոնի վկայությունը Երվանդունիների Դարեհի դինաստիայից Հիդարնեսից սերված լինելու մասին։ Այս տվյալները խախտում են առայժմ մեր պատկերացումները Երվանդունիների միասնական դինաստիայի գոյության մասին, և թույլ են

[1] Այդպես, օրինակ, Պոնտոսի թագավորները (Պոլիբիոս, գիրք 2-րդ, բաժին 43) և Կապադովկիայի թագավորները (Դիոդոր Սիկիլիացի, գիրք 31-րդ) սերված էին համարվում Դարեհ I Աքեմենյանի արյունակիցներից։ Հանրահայտ է նաև Անտիոքոս I-ին Կոմմագենի թագավորի օրինակը (տե՛ս բազմիցս հիշատակված Նեմրութ-դաղի արձանագրությունները)։

տալիս ենթադրելու նաև, որ Երվանդ II-ով Հայաստանում սկսել է իշխել մի նոր դինաստիա, որը գուցե անմիջական կապ չունի VI դարի հայ իշխանավորների հետ։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի տերիտորիայի հարցերը մասամբ կախված են վերը քննարկվող դինաստիական հարցերի լուծումից։

Հիմնական հարցը այստեղ հետևյալն է. արդյոք շարունակե՞ց գոյություն ունենալ ն. մ. թ. 6-րդ դարի միասնական Արմենիան նաև հաջորդ դարերում։ Պարզ է, որ այդ հարցի պատասխանը որոշ իմաստով կախված է Երվանդունիների, տվյալ դեպքում Երվանդ I ու Երվանդ II, ազգակցական ռեալ կապերից։ Եթե այդպիսիք իսկապես գոյություն են ունեցել և Երվանդունիները իրենց համարել են մի դինաստիայի անդամներ, ապա դա գուցե մի լրացուցիչ փաստարկ կարող է համարվել աքեմենյանների ժամանակաշրջանում միասնական Արմենիայի գոյության մասին։ Այդ դարերում է, որ անդիմադրելի ուժով շարունակում է ծավալվել հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը, որն ընդգրկում էր նորանոր տերիտորիաներ, ձուլում լեռնաշխարհում հնամենի ժամանակներից բնակվող ցեղեր ու ցեղախմբեր։ Այս պրոցեսը բնավ էլ կանգ առած չպիտի լինի նաև ն. մ. թ. III դարում ստեղծված քաղաքական անանպատ պայմաններում։ Երվանդունիների պետությունը արոհվում է, Հայկական լեռնաշխարհը բաժանվում է մասերի։ Այրարատում շարունակում են իշխել արևելյան Երվանդունիները, Ծոփքում ու Կոմմագենում արևմտյան Երվանդունիները, Հայկական լեռնաշխարհի մի շարք հատվածներում Սելևկյաններն են իրենց գերիշխանությունը հաստատում։

Չնայած այս դրությանը, հայ ժողովրդի կազմավորման հաջող ընթացքը մի կողմից և գաստակարգային հասարակության էլ ավելի խորը ձևավորումը մյուս կողմից, բարենպաստ պայմաններ են ստեղծում նոր միասնական պետության առաջացման համար։ Նշված պրոցեսների հետ անխզելիորեն կապված է Հայկական լեռնաշխարհի միավորումը Արտաշես I-ի օրոք։ Քաղաքական այս պրոցեսը, որի հետևանքով Հայաստանի մոտ ինը նահանգներ կցվեցին Արտաշեսի պետությանը, առեղծվածային բնույթ է կրում, եթե ի նկատի ունենանք այն կարճ ժամանակամիջոցը, որի ընթացքում նա կատարեց (ըստ Ստրաբոնի, Արտաշեսը 189 թ. Արտաշատի շուրջը տարածվող տերիտորիայի վրա էր իշխում, իսկ 179 թ., ըստ Պոլիբիոսի, նա Հայաստանի մեծագույն մասի տերն էր), ինչպես նաև այն, որ Արտաշեսը համեմատաբար փոքր տերիտորիա ունենալով իր տրամադրության տակ, ձեռք բերեց հայկական նահանգների գգալի մասը։ Բայց այդ պրոցեսը բացատրվում է Հայկական լեռնաշխարհում հայ էթնոսի կազմավորմամբ։ Հայ-արմենական ցեղերը տարածվել ու հաստատվել էին արդեն լեռնաշխարհի համարյա թե բոլոր նահանգներում, և թեպետ ոչ ամենուր տեղ էին մեծամասնություն կազմում, հայերի էթնոգենեզիսի պրոցեսը առաջ էր ընթանում Հայկական լեռնաշխարհի ամբողջ մասշտաբով։ Դրա համար էլ Արտաշեսը ոչ թե միայն նվաճում էր այս կամ այն նահանգը, ինչպես ասում է Ստրաբոնը, այլ իր պետությանը միացնում էր այնպիսի տերիտորիաներ, որտեղ նախորդ դարերում հաստատվել էին հայ-արմենական ցեղեր։ Արտաշեսը միայն քաղաքական սանկցիա էր տալիս մի պրոցեսի, որը զարգանում էր ամբողջ թափով դեռ նախորդ դարերից ու այժմ իր ավարտին էր հասել, պայմանավորելով իր հերթին Հայկական լեռնաշխարհի միավորումը։ Որոշ դեր կարող է խաղա-

ցած լինել նաև Երվանդյան պետության օրինակը, այդ պետության թողած տրադիցիաները, որոնց շարունակողը, պետք է կարծել, համարում էր իրեն Արտաշեսը[1]։

Վերև շարադրվածից երևում է, որ Հայկական լեռնաշխարհը միավորելու առաջին փորձը, ուրարտացիներից հետո, կատարվել է Երվանդունիների օրոք։ Հիրավի, կան մի շարք տվյալներ, որոնք թույլ են տալիս ենթադրելու, որ Ն. մ. թ. IV դարի երկրորդ կեսին ստեղծվել էր Երվանդյան մի պետություն, որն ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհի զգալի մասը։ Սակայն այդ տերիտորիաների միավորումը Երվանդունիների օրոք կրում էր ժամանակավոր, ոչ հաստատուն բնույթ։ Այդ ուներ իր որոշակի պատճառները։ Դասակարգային հասարակության զարգացման ցածր աստիճանը և հայ ժողովրդի պրոցեսի թերավարտ վիճակը կայուն նախադրյալներ չէին Երվանդյան պետության գոյության համար, որի հետևանքով էլ նա վատ դիմացավ Ն. մ. թ. III դարի փորձություններին։

Ն. մ. թ. II դարում, Արտաշես I Միավորողի օրոք ծնունդ առնող պետությունն արդեն այլ, նոր հիմքերի վրա առաջացավ։ Այդ հիմքերը, դասակարգային հասարակության հարաբերական հասունությունը և հայ ժողովրդի կազմավորման բարեհաջող ընթացքը հանդիսացան այդ պետության կենսունակության պատճառը, և նրանց մեջ է, որ պետք է որոնել հայկական ստրկատիրական պետության հարատևության բացատրությունը։ Իսկ և այնպես չպետք է անտեսել Հայկական լեռնաշխարհը միավորելու Երվանդունիների փորձի ազդեցության նշանակությունը, ինչքան էլ այդ փորձը երևրուն լիներ ու ենթակա բազմաթիվ տատանումների։

---

[1] Գ. Տիրացյան, Արտաշես Ա-ի նորագյուտ արձանագրությունները, «Լեռնակագիր», 1957, № 10։